




նմուշ, 43 շեղում՝ (6.4%), Սպիտակի տարածաշրջանից՝ 802 նմուշ, 552 շեղում՝ (68.8%), Ստեփանավանի տարածաշրջանից՝ 998 նմուշ, 40 շեղում՝ (4%), Տաշիրի տարածաշրջանից՝ 775 նմուշ, 51 շեղում՝ (6.5%):



Ավելի հաճախ արձանագրվել են խմելու ջրի մանրէաբանական ցուցանիշներով շեղումներ՝ Վանաձորում (11.7%), Սպիտակ (42.8%), Եղեգնուտ (71.4%), Դեբեդ (93.7%), Մարգահովիտ (72.2%), Լերմոնտովո (70%), Ֆիոլետովո (74.2%), Բազումում (100%), Արջուտ (87.9%), Ազնվածոր (100%), Սարամեջ (90.1%), Արևաշող (87.5%), Քարածոր (100%), Նոր Խաչակապ (94%), Ղուրսալի (100%), Շիրակամուտ (81.4%), Բլագոդարնոյե (100%), Նորամուտ (100%), Կաթնառատ (51.3%), Պուշկինո (27.9%), Գարգառ (26.7%), Ծաղկաբեր (90%), Սարահարթ (87.2%), Գեղասար (71.4%), Գոգարան (86.5%), Ճոճկան (55.5%) համայնքներում:

Մակարոնաբանական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 29 նմուշ, շեղումներ չեն արձանագրվել: Սանիտարա-քիմիական ցուցանիշներով հետազոտվել է խմելու ջրի 5084 նմուշի հետազոտություն, որոնցից 32 նմուշում արձանագրվել է շեղումներ (0.6%), այդ թվում՝ Սպիտակ «Զրաշեն-Սպիտակ» ջրմուղում (ամոնիումային ազոտ- 3 նմուշ), Սպիտակ «Շիրակամուտ-Սպիտակ» ջրմուղում (ամոնիումային ազոտ- 1 նմուշ), Վանաձոր «Տարեցների տուն» գերատեսչական ջրմուղում (ամոնիումային ազոտ- 1 նմուշ), Քարածոր «Քրդի արխաջ» համայնքային ջրմուղում (ամոնիումային ազոտ-1 նմուշ), Մարգահովիտ («Պապոյի ուրթ»

համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ), Լեռնավան («Չախկալի-Սպիտակ» ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ), Ջրաշեն («Չախկալի-Սպիտակ» ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ), Նոր Խաչակապ («Ալաշաններ» համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ, «Դոշի աղբյուր» ամոնիումային ազոտ-1 նմուշ), Բլագոդարնոյե, Նորամուտ (մակերեսային համայնքային ջրմուղներ՝ ամոնիումային ազոտ-5-ական նմուշ), Արևաշող («Ոսկանանց աղբյուր» համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ), Կաթնաջուր («Չախկալի» համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-2 նմուշ), Շիրակամուտ («Մագոյի աղբյուր» համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-1 նմուշ), Դեբեդ («Նով աղբյուր» տեղային և «Գյոլխանա», «Խառատի թալա» համայնքային ջրմուղներ՝ ամոնիումային ազոտ-5 նմուշ), Եղեգնուտ («Կառնուտ» համայնքային ջրմուղ՝ ամոնիումային ազոտ-2 նմուշ) համայքներում:

Առկա 128 համակարգերից վարակազերծվում է 15-ը՝ 5-ը «Լոռիջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից, 10-ը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից: Չեն վարակազերծվում «ՀԶԿ» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող «Ղազանչի», «Գերատեսչական թաղամասի հորատանցք» և «Հովարա» ջրմուղները: Մնացորդային ազատ քլոր ցուցանիշով կատարվել է 2845 նմուշի հետազոտություն, որից 27 նմուշում հայտնաբերվել է շեղում՝ 0.94%: Շեղումներն արձանագրվել են՝ Սպիտակում («Շիրակամուտ-Սպիտակ», «Չախկալի»), Ջրաշենում («Չախկալի»), Լեռնավանում («Չախկալի»), Ստեփանավանում («Նովոսելցովո»), Կաթնաջուրում («Չախկալի»), Վանաձորում («Լեռնաջուր», «Նովոսելցովո», «Մաքրման կայան»), Մեծ Պարնիում («Չախկալի»), Լեռնապատում («Լեռնաջուր»), Վահագնաձորում («Նովոսելցովո»), Փամբակում («Նովոսելցովո»), Գյուլագարակում («Նովոսելցովո»):

Մի շարք բնակավայրերի ջրամատակարարումը իրականացվում է գրաֆիկով՝ Վանաձորի «Մաքրման կայան» ջրմուղից սնվող (Աղայան, Չուխաջյան փողոցներ, Երևանյան խճուղի, «Բազում» թաղամաս), Գուգարք, Շահումյան գյուղերը, Սպիտակի «Չախկալի» ջրմուղից սնվող (Շվեցարական, Ուզբեկական, Էստոնական, Կ-11, Նորվեգական, Իտալական, Վարպետանց, Տաշիր թաղամասերը), «Ջրաշեն-

Սպիտակ» ջրմուղից սնվող (Սովխոզային, Քր-Քրքորյան, Ս. Ավետիսյան, Առափնյա փողոցներ), «Գերմանական հորատանցք» ջրմուղից սնվող Գերմանական թաղամասը, «Շիրակամուտ-Սպիտակ» ջրմուղից սնվող (Այգեստան թաղամաս, Ալեք Մանուկյան, Շահումյան, Ոփյան, Խնկոյան փողոցներ, Շիրակի խճուղի), Ջրաշեն և Լեռնավան գյուղերը, Ստեփանավանի «Գետավան» ջրմուղից սնվող թաղամասերը, Ագարակ, Կողես, Յաղդան, Ուռուտ, Լոռի-Բերդ, Սվերդլով գյուղերը, Տաշիրի՝ «Հովդարա» ջրմուղից սնվող Մեծավան, Լեռնահովիտ, Կրուզլայա, Շիշկա, Սարչապետ գյուղերը, Ալավերդո «Լոռի Բերդ-Ալավերդի» ջրմուղից սնվող՝ Ջրավազանի փողոցը, Սանահին-Սարահարթ թաղամասը, Թումանյան, Քարինջ, Այրում, Մղարթ, Լորուտ, Աթան, Շամուտ, Ահնիձոր Դսեղ, Կաճաճկուտ համայնքները:

Ավելի հաճախ են արձանագրվել վթարներ՝ Վանաձորում, Գուգարք, Լեռնապատ, Կուրթան, Շահումյան, Խնձորուտ, Փամբակ, Ամրակից, Ձորագյուղ, Ագարակ, Վահագնի, Գյուլագարակ, Դարպաս, Վարդաբլուր գյուղերում:

Լոռու մարզում չկենտրոնացված՝ թվով 34 բնակավայրերից և 11 հանգստի գոտիների ծորակներից մանրէաբանական ցուցանիշներով հետազոտվել է 220 նմուշ, որից 100 նմուշում արձանագրվել են շեղումներ (45.4%), քիմիական ցուցանիշներով 220 նմուշ, որից 1 շեղում (0.45%):

Լոռու մարզում արձանագրված աղիքային վարակիչ հիվանդություններից 79 դեպքերի հասցեները համընկնում են խմելու ջրի հետազոտությունների արդյունքում հայտնաբերված շեղումների և արձանագրված վթարների հասցեների հետ: Լոռու մարզում 2016թ. երկրորդ կիսամյակում ջրային գործոնով պայմանավորված աղիքային վարակիչ հիվանդությունների բռնկման դեպքեր չեն արձանագրվել: